

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ԴԵԼԵԳԱՆԻՅ ՏԻՆԼԵ ԱՂԷԺԱՆԴՐԱՊՈՍԷ.

(ԵՐԵՎԱՆԻ ԱՐԻՄՈՒՄ 1882 Թ. Ա.)

Շիրակի և Փամբակաձորի զիւղացիք համեմատելով Երանի բնակիչներին՝ աւելի խեղճ են. բայց սոքա իրրե յաջորդներ Շիրակի մեծագործ հայերի, Անին և այլ աւերակները միշտ աչքի առաջ ունենալով, օգուտ քաղելով մօտիկ քարահանքերից Ալեքսանդրապօլու որմնաղիրների շնորհիւ աւելի վայելուչ եկեղեցիներ ունին շինուածքի կողմից. իսկ ներքինը շատ անհամեմատ գերազանց է բարեկարգութեան կողմից Երանու եկեղեցիներից, ուր եկեղեցւոյ պաշտօնեայքը անսանձ և անկոպար կեանք են փարում, ոչ հոգ. Գործակալի և ոչ Առաջնորդի ձայն ու անուն լսելով:

Շիրակում քահանայքը ընդհանրապէս աւելի պարտաճանաչ են քան Երանու քահանայքը. Ալեքսանդրապօլու վիճակում արբեցողները բացառութիւն են, իսկ Երանում չարբեցողները ժողովրդեան ընդհանուր բնաւորութեան նայելով՝ Երանեցիք աւելի խորհուն՝ հանգարտաբարոյ և քաղաքավարի են քան Շիրակեցիք, որոնք զեռ թեթեւութիւնը, զիւրադրողութիւնը և կոպտութիւնը իրրե հայրենաւանդ սովորութիւնը պահպանել են. նոյն ինքը խօսուածք և հազուստի անձաշակ զրութիւնը զեռ իւրեանց կոշտութեամբ, ժողովրդի բնաւորութիւնը ըստ պատկերացնումեն. Աի հատիկ նկատելի բանը, որ ընդհանուր է Շիրակացուն, այն է որ, զփաբակեր ու շաքարներ (պաշտպամբաւոր ամառնային կեցարան) չունին. ամբողջ տունը իւր բոլոր բաժանումներով, զոմով, ախոռով, մառանով՝ փարախով մի ծածքի տակ են և մի մուտք ունին. որով ընդհանուր շէնքը վարակւած է անտանկի գարշահոտութեամբ, որ յառաջանում է անասունների արտաշնչութիւնից՝ արտահոտութիւնից և խառն ի խառն զանաւորած տարեկան պահուստից: Զիւրը ամառ թէ ձմեռ՝ զարուն թէ աշուն ընդունվում է զոմի օդայում, ուր զիւղացու սիրելի հիւրը նորա սիրելի անասունների հետ զիշերելով, նայելով իւր անձնական հանգամանքին՝ հանդիստ կամ անհանգիստ է լինում: Չայով հիւրասիրելը ընդհանուր սովորութիւն է զարձեւ և հանգամանքի ամենա-

բարձր նշանն է, թէպէտ և վայելողի ամենամեծ տանջանք է, եթէ նա փոքր ի շատէ զիտէ թէ ինչէ չայլ, վասն զի զոքա միայն չայի անունը զիտն, այն ևս յայտնի է իրանց, որ չայի ջուրը տաք պէտք է լինի: Փամբակեցու և Շիրակացու մասին այսքանս բուական համարելով առ այժմ, զառնամ իմ ճանապարհորդական նկատողութիւններին:

Փամբակաձորի սարերի կրճից դեռ նոր անցել էի դէպի Շիրակի դաշտը, հեռուից, բաւական հեռուից հարաւային արեմուտք ընկած երևումէ մի հոծ բնակավայր, նկատելի է այդ բնակավայրի հիւսիսային արեմուտքում մի այլ ընդարձակ շէնք, կողքին սե սե կէտերի նման բաներ են երևում, որոնք գնալով գնալով աւելի նկատելի են դառնում և որոշ կերպարանք ստանում, բնագոյումը խիոյն յայտնումէ ճանապարհորդին, որ այդ արեւելեան Շիրակի զըլխուր քաղաքն է, Ալեքսանդրապօլն է, բայց մարդս ի բնէ թերահաւատ լինելով իւր բնագլմանը չէ լսում, չէ հաւատում, հարցնումէս անցորդին կամ կառապանին, «քաղաքն» է, ապումէ, «քաղքէն կուգամ» ասումէս անցորդները, քաղաք կգնամ, ասում են կողները: Ուրեմն քաղաք բառը Շիրակացին յատուկ անունի տեղ ընդունելով Ալեքսանդրապօլ է կամենում հասկացնել: Ուրեմն երեւացող հոծ բնակավայրը Ալեքսանդրապօլն է, հիւսիս—արեմուտք ընկած ընդարձակ շէնքը, Ալեքսանդրապօլու անունի բերդն է, մօտի սե սե բծերը հետզհետէ վրանի կերպարանք են ստանում, և զննուորների վրաններ են: Վեռ հեռուից, մի ընդհանուր հայեաց դէպի քաղաք, և ահա զմրէթներ, ճրչափ իրար մօտիկ: Հայկական ճաշակով շինուածէ այդ եկեղեցիքը, համարելով Հայոց եկեղեցի, նոյն համազմամբ մտնումէս քաղաք, մտածելով որ այդ մարդիքը միայն իւրեանց բան ու զործը թողած Փարիսեցու նման արտաքին Աստուածապաշտութեան ցոյցերով են զբաղուած. մտածումէս և սպասումէս տեսնել թէ մաքսաւորի հաւատով աղօթողներ էլ կան թէ ոչ:

Վեռ այն տպաւորութեան տակ, որ իմ վերայ ներգործել էին լրագրական յօդուածները, և զանազան անձնաւորութիւններից լրսած հակասական խօսքերը, ինքս ինձ մտածում էի, այո, եթէ այս քաղաքի ժողովուրդը Աստուածապաշտութեան արտաքին նշանները ի ու լի ունին, այդ յայտնի է հոյակապ եկեղեցիներից. հարեանտեսածներս համեմատելով լսածներին ու կարգացածներին հետ,

առաջին անգամ հետեւեալ եղբակացութեան հասայ, որ Ալեքսանդրապօլու ժողովուրդը իւր հոգու փրկութեան գործը կատարած է համարում քար ու կրով շինուածներ կառուցանելով և Աստուծոյ անուանը նուիրելով: Ինքս ինձ մտածումէի թէ, այդ ժողովուրդը, որ այդքան համբաւ է ստացել իւր ժամասիրութեամբ, մի՞թէ եկեղեցի մտած ժամանակ իւր ականջները խցումէ, որ չլսի շարունակ կրկնվող խաղաղութեան խօսքերը: Ասորդացածիս ու լսածիս տպաւորութեան տակ մտածումէի, մի՞թէ այդ ժողովուրդը «խաղաղութիւն ամենեցուն» խօսքերը բնաւ առիթ չէ ունեցել լսելու, որովհետեւ արդէն հռչակուած էր թէ՛ Ալեքսանդրապօլու ժողովուրդը կառուցութեան է բաժանուած, խռովութիւնը անպակաս է այդ տեղից և մարդիկ եկեղեցու մէջ երբոր պէտքէ լսէին սիրոյ խօսքեր, մանաւանդ Պօղոս առաքելոյ զրբի այն հաստուածը, որի մէջ նկարագրած է սիրոյ մեծութիւնն ու զօրութիւնը, և հետեւեալ խօսքերով է վերջանում «եթէ զսէր ոչ ունիցիմք՝ ոչ ինչ կմք» թողումէ և եկեղեցուց դուրս գալիս կամ մինչև այդ ժամանակ եկեղեցի չէ մտնում:

Այս առաջին անգամ զանազան ենթադրութիւններս մինը միւսին յաջորդելով մի անելանելի դրութեան մէջ էին թողնում ինձ, որովհետեւ ես պարտաւորուած էի այդ ժողովրդի հետ գործ ունենալ և ինձանից անկախ պատճառով անորոշ ժամանակով, որ զուցէ շատ երկար կամ շատ կարճ տեղութիւն կունենար, նայելով հանդամանքին: Ապագայ յաջողութեան և ձախորդութեան երեւակայութեամբ մոռտ գործեցի քաղաք. կարծեմ բնական է որ ամեն ոք նոյն տրամադրութեան մէջ կլինէր, ով իմ դիրքը ունենար: Այլերև յիշեալ իմ ենթադրութիւններն հիմնուած էին լսածներիս և կարգացածներիս վերայ: Ի հարկէ լսածից աւելի ծիշը տեսածն է տեսածից ծիշը՝ շօշափածը: Այլաւ ժամանակ, որ ենթադրութիւնները տեղի պիտի տային իրողութիւններին, և ահա. ես, քաղաքը մոռտ գործելուց մի օր յետոյ՝ շատ բան իմ ենթադրութիւնների հակառակ տեսայ, և մի քիչ քաջալերուեցի, շատ բան չափազանցօրէն պատմուած դտայ, դա ինձ յուսադրեց, իսկ գործող հաստատութեանց մրցումը միմեանց զերազանցելու համար զէպ ի հասարակաց բարին, ինձ շատ մխիթարական երևեց, ես համոզուեցի, որ միայն աչքի տեսութիւնը կարող է պարզել այն բոլոր երեւակայութիւնները և փարատել բոլոր տարակուսութիւնները, որոնք մարդուս մոլորեցնումեն: Աս իմացայ որ մօտ առ մօտ եղած հայկական

ճարտարապետութեամբ բոլոր եկեղեցիքը հայոցը չեն, թէպէտ և Տրդատ ճարտարապետի թոռների մօքի ծնունդ լինելուն չի՞ տարակուսում. և եթէ կարելի է ասել, դեռ Ալէքսանդրապօլին հարկաւոր է մի եկեղեցի էլ քաղաքի արեւելեան մասնում, որ եկեղեցիներից բաւական հեռի լինելով ժողովուրդը մեծ նկրութիւն է կրում և կը կրի ձմեռը եկեղեցի գնալու համար: Արկու հոյակապ նորաշէն և արտաքուստ շատ գեղեցիկ եկեղեցիքը համազօր ինչ, որ Ալէքսանդրապօլիք իւրեանց նախնեաց Աստուածաշտութեան կատարեալ ժառանգներն են, տարակուսումէի թէ մի՞ զուցէ նախնեաց բազմաց անխմաստաւէր բարքն էլ խռովութեան և անմիաբանութեան հետ իբրեւ ժառանգութիւն ստացած լինին, բարեբաղդաբար հակառակը նկատեցի, տեսայ որ Ալէքսանդրապօլը թէպէտ մի դաւառական քաղաք է, մի քաղաք, որ հազիւ յիսուն տարի է զոյութիւն ունի, սկզբնաւորուած խեղճ, աղքատ, հարստահարուած և հալածուած զաղթականներով. ուսումնարանական հաստատութեան կազմակերպութեամբ, նորա ներքին և արտաքին համարեա թէ նախանձելի դրութեամբ բազմահայ շատ նահանգական քաղաքներից գերադաս է իւր դպրոցներով, որոնց տնտեսական բազմաձախք պիտոյքը հողումէ մի ժողովուրդ՝ որ հազիւ իւր օրականը հայթայթումէ,—է՛ որ արհեստով, է՛ որ երկրագործութեամբ, է՛ որ շատ սահմանափակ վաճառականութեամբ: Պատիւ է այս հասարակութեանը, որ ժամասիրութեամբ նախնեաց լաւ յատկութեանը հետեող են, իսկ իմաստասիրութեամբ՝ նախնեաց վատ յատկութեանը՝ անհաղորդ իսկ միաբանութեան և խաղաղութեան մասին՝ առ այժմ լռումեն: Աթէ վշտանան Ալէքսանդրապօլիք հետեւալ ճշմարտութիւններից, այն ժամանակ ես կասեմ՝ որ՝ զոքա միայն շողոքորդութիւն են սիրում, այսինքն սիրումեն չեղած՝ լաւ յատկութիւնը, իբրեւ եղած ստեղծել, փաթաթել իրանց վրին, որ փառաւորուն իրանք և փառաւորն շողոքորդին. իսկ ես շողոքորդութիւնը շողոքորդութիւն համարելով, և մի ցած մլճոց մարդահաճութեան՝ իւր փառաւորութեամբ թողնում եմ սիրողներին, ճշմարտութիւնը լաւագոյն համարելով՝ պատմել, գուցէ ոմանք հենց իմ տողերից ինչ շողոքորդ դասն, իրաւունք ունին:

Մենք հայերս և մեզ հետ էլ Ալէքսանդրապօլիք որչափ և կըրթութեան հետեւինք, որչափ և Աւերոպական լուսաւորութեան առաքեալ տիտղոսը, որ յատկացուած է մեզ զանազան երեւելի ծանա-

պարհորդներին, ջանանք մեզ սեպհականել, այնու ամենայնիւ չունենք զեռ յիշխալ տիազոսին վայել բոլոր բարեմասնութիւնները, մենք զեռ Ասիացի ենք, և առաքելութեան տիազոսի արժանաւորութիւնը միայն մեր արտաքինի մէջ փնտռելու է առ այժմ. իսկ մեր ներքինը լաւ և վատ յատկութեանց մի զանգուած է, և մենք չունենք զեռ այն առաքելութիւնը, որ վայել է Աւերոպական կրթութեամբ զարգացած, Վերխտոնէական վարդապետութեան լուսով լուսաւորուած և կատարեալ ազնիւ բնաւորութեամբ սնուած մարդուն: Մեր գործը մեր բնաւորութեան յայտարարն է. մեր զբոխաւոր ջանքն է մեր բոլոր գործերին միայն արտաքուստ փայլ տալ և թողնել արտաքինի մէջ էլ զեռ մի կիտ, որ ներքինին յայտարար լինի. ահա այսպէս, մենք հայերս շինումենք հոյակապ տուն Աւերոպական ճաշակով, ամենայնիւ վայելուչ արտաքուստ և կամենալով աւելի շքեղութիւն տալ մեր ձեռակերտին, սկսումենք պատերի վերայ անպէտք, անձաշակ նկարներ անել տալ, փող ենք ծախսում այդ ամենի համար, և այդ ամենը անեղուց յետոյ, մոռանում ենք ուշ դարձնել բնակութեան համար յարմարութեանը, թող այդ, այդքան զեղեցիկ շինուածքի ծակատին կամ կտրանք թողնումենք մի խոշոր թերութիւն էլ, որ մնում է ու մնում, մինչև ով զիտէ երբ: Այնպէս և Ալեքսանդրապոլցիք իբրև Հայեր, Ասիացի հայեր, աշխատում են միշտ արտաքինը փայլուն և մաքուր, հոյակապ և շքեղ երևացնել, առանց ուշ դարձնելու ներքինին թողնելով մասնաւորները, խօսեմ եկեղեցու վերայ, որ պատկանելով բոլորին՝ հետեւաբար և իմ ասածիս օրինակը կդառնայ բնահանրութեան վերաբերութեամբ:

Յայտնի է որ Ալեքսանդրապոլցիք Անույ Մայր եկեղեցու պէս մի եկեղեցի կառուցանելու համար շատ տարիներ աշխատեցին, և պէտք է ասել, որ կարողացան իւրեանց աշխատանքի արդիւնքը տեսնել, և այսօր ամեն մինը կտեսնի մի մեծ, հոյակապ, բարձր և վայելուչ տաճար, որի վերայ մօտաւորապէս հարիւր հազար ծախսուած է անշուշտ. բայց ինչ էք կարծում, այդ հոյակապ եկեղեցու զմբէթի խաչը փայտից է, և թեկըրը արդէն սկսել են կոտրտուել: Մինչև Օգոստոս ամիսը զեռ զանգակատան առաջ տնկած էին դերանների ով զիտէ որ ժամանակից՝ շինութեան յիշատակարանը գրելու: Պատերի վերայ քանդակուած են եղել Պետրոս, Պօղոսի պատկերները այնպէս այլանդակ կերպով, որ հանդուցեալ Վարբիէլ եպիսկոպոսը խորհուրդ է տուել եղծելու, լաւ է որ լուի են. մինչև այսօր էլ

եկեղեցու հարաւային սրտի վերայ, ուսումնարանի հանդէպ մար-
դահասակ խոշորութեամբ քանդակուած են երկու հողեաւ հրեշ-
տակների պատկերներ, որոնց մինը արդարի հողին է առել և ձեռքի
վերայ ունի, իսկ միւսը՝ մեղաւորի՝ որ մազերից է քաշ առել: Այս
պատկերները այնպէս կողիտ և անխորհուրդ դուրս են բերուած, որ
արժէ եկեղեցու շուրջ ջնսմացնելու համար ջնջել:

Մենք հայերս որչափ և զարգանանք, այնու ամենայնիւ փոխանակ
կեանքի ու կենդանութեան օրինակներ միշտ առաջներս ունենալու,
առաքինութեան ու մեծագործութեան դալափարներով մեր հողին
ու սիրտը զարգացնելու, դեռ ուղումենք վախացնելով Աստուծոյ
ճանապարհին պահել մեզ, մեր որդիքը և մեր ժողովուրդը: Աւելի
յարմար էր Ալեքսանդրապօլցոց՝ Ս. Պետրոս, Պօղոսի տեղ, եթէ
հարկ կար, զեկեղեցի կերպով քանդակել տալ Ս. Թադէոս և Բար-
թուղիմէոս առաքիւնների պատկերներ, որոնց քարոզութեան շնորհիւ
քրիստոնէութիւնը մօտաւ Հայաստան, մի ուրիշ տեղ, Ս. Գրի-
գոր Առաւորչի և Տրդատի պատկերը, իսկ այլ պատկերաց տեղ
էլ՝ Ս. Սահակ և Մեսրոպի պատկերները՝ նկարել՝ աշակերտներին
հայոց այբբէնը սորվացնելիս և սուրբ Գիրքը թարգմանելիս:

Այլեկեցին իւր արտաքին շքեղութեամբ ու ներքին անշքութեամբ
ցոյց չէ տալիս իւր զաւակների փարիսեցիութիւնը, և մի՞թէ զխա-
ւոր նպատակն է միշտ արտաքինը: Օտարականը երբ մանուկ է եկե-
ղեցի, նորա ներքինն իւր բոլոր անշքութեամբ երեւն չէ գալիս
և այլն: Չեմ կամենում մանրամասնել ամենը:

Բայց 3500 տուն ժողովուրդ ունեցող մի քաղաք՝ որ իւր ուշա-
դրութիւնը դարձրել է միայն քար ու կրի վերայ, եթէ կամենար կա-
րող էր եկեղեցու ծոխ հանդերձանքի և նորա ընտիր պաշտօնէից
հոգսը քաշել: Ալեքսանդրապօլու եկեղեցիների ներքինն և եկեղեցւոյ
պաշտօնեայքն իւրեանց խեղճութեամբ բնակայն բողոքաւոր են և
մասնուամեն իւրեանց ժողովրդին իբրեւ անհոգ զաւակներ, որոնք զբ-
րանուամեն հարկաւոր խնամքը տանել եկեղեցու և նորա պաշտօնէից
վերայ: Ալեքսանդրապօլու նուրբ ծաշակը և ընդհանուր զարգա-
ցումը ցոյց տալու համար միայն եւ եկեղեցին նկարագրեցի, որ
բոլորին է պատկանում և ոչ որ ի մասնաւորի չի կարող վշտա-
նալ: Մի քանի խօսք էլ քաղաքի արտաքին տեսքի և նորա դր-
ժած ապաւորութեան մասին խօսելով, գտնում գէպի ուսումնա-
րանները:

Ալէքսանդրապօլը զիւղացու համար՝ մանաւանդ Շիրակացու համար, որ ուրիշ քաղաք չէ տեսիլ, քաղաք է, և լաւ քաղաք, բայց քաղաքացու համար, մի զիւղաքաղաք, զուրկ բոլոր վայելչութիւնից. նոյն ինքն մոխրագոյն քարից շինուած տները որչափ և զիւղեցիկ շինուած լինին, իւրեանց տխուր գունով չեն հրապուրում մարդու աչքը, եթէ քաղաքացիք միտ դնեն այդ քարերը ներկել հաճոյական գունով, մի օգուտ էլ այն կունենային՝ որ տները կազատուէին խոնաւութիւնից, որովհետեւ քարերը ծծուն են և ներկը զոցա այդ յատկութիւնը կարող էր փոխել՝ խնլով մանր ծակոտիքը: Զրկայ քաղաքային պարտէզ, ծառատունկների և ընդհանրապէս բուսականութեան բացակայութիւնը զգալի է մանաւանդ սովոր մարդուն: Եթէ կամենային քաղաքացիք կարողէին ածելնել զանազան տարազատու և անպտուղ ծառեր և թէև օրինակ տուող էլ եղիլ է, բայց հետեող՝ շատ սակաւ, եթէ Վփչաղի վանքում, որ այնքան բարձր է Ալէքսանդրապօլից, և Վեաֆթաւրի զիւղում պտղատու և անպտուղ ծառեր կարող են ածել, ուրեմն Ալէքսանդրապօլում էլ կաձեն: Միայն մարդ է, որ գործէ զերկիր:

Փողոցները անձրեւային օրերում կատարեալ ճահիճներ են, իսկ ամառնային չոր օրերում՝ աւազոտ անապատ, թէ ցիւր և թէ աւազը բնակիչների անհոգութեան յանցանքի ամենամեծ պատիժն են: Ալէքսանդրապօլը ամառն ունի մի սովորական հողմ՝ որ սկսվում է ճաշից յետոյ, և շատ սարսափելի է իւր յարուցած լուրդով. այս հողմը խաբախալի քափ է կոչվում և Վաղարշապատի Լոռա-որդու-քաճոց աւելի զօրեղ է: Օգը վատ չէ, իսկ ջուրը թէպէտ պաղ և մաքուր, բայց ծանր և շօռ է: Վաճառականութիւնը այժմ շատ ընկած է, մարդիկը անձկանօք են յիշում պատերազմի ժամանակը, երբ ճակնդեղի մի փոքրիկ հատը 30 կոպէկով են ծախելիս եղել:

Ստորին դասակարգի մէջ բարոյականութիւնը չարաչար խախտուած է, որի ապացոյցն են անհամար ամուսնական վէճերը, մանաւանդ նորաստակների մէջ: Երիտասարդների մի խումբ, որ չափիւն մականունն ունին, վերին աստիճանի անբարոյականացած են, և հայհոյութեան նոր նոր դասեր են տալիս հանդիպողին: Բնակիչքը բաղկացած են առ հասարակ հայերից, և սակաւ Յոյներից, Պասիկներից և մի քանի տուն Պոսաններից: Հայերը զղեստով, փոքր մասը, մանաւանդ ծառայողներն և ուսուցիչները՝ Աւրոսացի են, մեծ մասը Արեւանցի, իսկ փոքրագոյն մասը մանաւանդ ծերունիները Արզրումցի:

Վարացի և Բայազիտյի: Սանանց մէջ զգեստով Եւրոպացի սահաւ են, Վարացի՝ նոյնպէս, իսկ մեծ մասը Լէհրա՞ կոչուած սպիտակ բրդից նուրբ գործուած մի կերպասի մէջ փաթաթուելով զեռ հին տխան են ներկայացնում արտաքուստ: Պաղթական բնակիչքը ընդհանրապէս արհեստաւոր են և վաճառական խանութաւոր: Իսկ բնիկները որ զեղացի կամ ռանչպար էլ են կոչուում և Փամբակեցոյ բարբառի խառնուրդով խօսում, երկրագործ են, դոցա պարկեշտութիւնը համբաւուած է: Վիւրակէ և տօն պարսպ օրերին, ժողովուրդը վերին աստիճանի զրօսասէր է թվում. մի ամենաշնչին զէպքն կարող է մի բօպէի մէջ հարկւրաւոր մարդիկ զէպի ինքն քարշիւ. իբրեւ Տաճկաստանի գաղթականներ զեռ զիւրազրգուութեան յատկութիւնը իբրեւ մի սուրբ աւանդ անկորուստ պահպանել են. որ շատ զէպքում զէպ ի հասարակաց բարին են գործադրում և լաւ են անում. ուր հարկաւոր է գործ՝ այնտեղ բոլորովին աւելորդ են երկար ու բարակ մտածմունք ու դատողութիւն, որով և դանդաղ կոտութիւն: Բոլոր ազգային գործերը ուրիշ տեղերի պէս բարձի թողի արած չեն, գործողները միշտ պատասխանատուութեան տակ են և ճշունմն են զգում ի հարկաւոր զէպս: Այսպէս, ուսումնարանական գործը յանձնուած է հոգաբարձութեան, բայց 40 հոգի ընտրողները միշտ հսկումն հոգաբարձուաց գործունէութեանը և ի պահանջել հարկին՝ միշտմտում, երբեմն էլ անտեղի կերպով. այդ ժամանակը անձնական հաշիւը կամ բարեկամական կապերը ի նկատի ունենալով. բայց սկզբունքը լաւ է: Այսօր անձնականը կը հետաքրքրի, վաղը կարող է գործը հետաքրքրել: Վերջապէս ազգային գործերի մէջ, անտարբերութիւն չըլլա՞յ, որ շատ ուրախալի երևոյթ է:

Չի կարելի ասել թէ քաղաքումս կուսակցութիւն չըլլոյ, կայ, բայց այժմ հակառակութիւն ու խռովութիւն չկայ: Այդ կուսակցութիւնները մրցման մէջ են և աշխատումն միմեանց գերազանցել հասարակական ինչ ինչ գործերում: Մրցութիւնը լաւ է, գործի համար մինչեւ անգամ հակառակութիւնը՝ ներկի և համակրելի, իբրեւ կենդանութեան նշան՝ որ շարժումն է ուղում. բայց դժբաղդաբար իբրեւ կիսակիրթ մարդիկ մրցութիւնը գործի տեսակետից չեն սկսում՝ այլ անձնականութեան. փոխանակ մրցութիւնը գործից սկսուելու և գործի յաջողութեամբ վերջացնելու, անձնականութիւնից սկսվումէ, և գործի յաջողութեամբ կամ ձախորդութեամբ

վերջանում, ատելութեան ողին կենդանի և զօրեղ դարձնելով մրցող երկու կողմերի մէջ: Այդ պակասութիւնն էլ ժամանակն ու կրթութիւնը կուղղի:

Արշափ ես նկատել եմ, Ալէքսանդրապօլու ժողովուրդը խօսքով աւելի զպրոցասէր է՝ քան գործով. և այս նորանից եմ հետեցրնում. որ զոքա բոլորն էլ աշխատում են զպրոցը արտաքին պատահական եկամուտով կառավարել, թէպէտ և այդ էլ իրանցից է զուրս գալիս կողմնակի կերպով: Փոքրիկ Նոր Այսպէտը իւր զպրոցի մէջ փոքր ի շատէ փոփոխութիւն տեսնելով, իսկոյն զրդուեց և մի ընկերութիւն կազմեց զպրոցի ապագան ապահովելու համար, և այդ ընկերութեան անդամները 100 բուրջի միանուազ վճարել պարտք անձին համարեցին. իսկ Ալէքսանդրապօլը, իւր հոյակապ զպրոցական շէնքը սկսեց և վերջացրեց, բոլոր եղած զրամադուխտ ի գործ դնելով և դեռ մօտ 5000 բուրջի պարտքի տակ մնալով, բայց մինը զուրս չեկաւ ինքնարեւարար մի զսոցոլութիւն անելու, թէպէտ և խօսքով՝ մեծամեծն են բարբառում: Այս պակասութիւնն էլ ժամանակը ու կրթութիւնը կուղղի ասելով. մօխթարունք և յուսանք:

Ալէքսանդրապօլը իւր այժմեան զրութեամբ զպրոցական գործերի մէջ երկու հաիապատկեր կրթարաններն էլ ունի. թողնելով կանոնաւոր զպրոցների մասին խօսելը, վերջին անգամ խօսեմ հին զպրոցական կեանքի վերայ, որի պատկերը դեռ Ալէքսանդրապօլում աչքի առաջ ունիմ, զոքա մասնաւոր զպրոցներն են, որոնց զոլութիւնը յայտնի է Թահմական տեսչին: Վոքա այժմ էլ շատ քիչ փոփոխութեամբ հին խալիֆայական սկոլեմայով ու Դեբեով են կառավարվում:

Վեա ես մոռացել չեմ այն ժամանակը, երբ ծնողք իւրեանց զաւակներին կարդալ տալու համար ուսուցչին յանձնելիս՝ ասումէին, խալիֆայ, միսը քեզ, ոսկըր ինձ. դու գիտես, քո հոգու սաղաղէն, էլ իմը չի քոնն ա:

Անդանից շատերը նոյն բաղդին արժանացել են՝ իւրեանց սկզբնական կրթութիւնը ստանալիս: Աւ իրաւ որ մենք յանձնուելով այդ խալիֆայ (խալիֆա) ուսուցիչներին, պէտք էր մեր միսը թողնէինք խալիֆին, միայն ոսկրներով աւողջ դաւնայինք մեր հօր տուն. վասն զի բնակարանը, ուր մենք պարտաւորուած էինք սովորելու, կամ խալիֆի խոնար ու մութ մառանն էր կամ զամի օդէն: Այնպէս ըստ պետական ձգած մի կտոր քուրչի կամ մորթի վերայ մենք պար-

տաւոր էին ծալապտտիկ և անշարժ նստել ժամերով: պարտաւոր էինք երբեմն, ուսուցչի թոյլտուութեամբ, երգելով կարդալ դասնա-
րըս, կամ լռիկ միայն դասներէս տողերը համարել, աչքի տակից
դիտելով ուսուցչի զրութիւնը, կամ վերացեալ կերպով ապուշ
ապուշ այս կամ այն առարկային մտիկ անել: Այն ինչ որ պա-
հանջ է այժմ, այն ժամանակ յանցանք էր և չարութիւն: Այժմ
ուսումնարանը եթէ չունի ընդարձակ բակ աշակերտների խաղալու
համար, համարվումէ անյարմար շէնք իւր նպատակին. այն ժամա-
նակ մեր պարոն խալիֆայ ուսուցիչները իւրեանց խոնաւ, նեղ ու մութ
մառանն էլ շատ էին համարում մեզ համար. և որպէս զի մենք
բնաւ չըկարողանայինք շարժուել, մեր հանդերձի քղանցքի վերայ
աւազ էին անում ու կնքում. վայ այն անզգոյշ արդային, որի քը-
ղանցքի վերայի կնիքը խախտուած կըլինէր: Մենք պարտաւորուած
էինք ամենայն օր ծոմ գնալ դպրոց և մեր ուսուցիչները այդ պա-
հանջումէին. նոքա մեր լեզուից դուշակումէին մեր զանցառութիւնը
և խիստ պատժում. վերջապէս, հին դպրոցական կիանքը մեր մա-
նուկների համար ընդհանրապէս և Ալեքսանդրապոլցւոց համար
մասնաւորապէս բոլորովին անհաւատալի կըթուէր իւր բոլոր զխո-
ւաճների մանրամասնութեամբ և ամենահետաքրքիր ու ծիծաղա-
շարժ առեկոթներէից (առակ) աւելի կը կարդացուէր, եթէ զորա խկա-
կան պատկերը մի քիչ բարեփոխուած չըտեսնուէր դեռ զիւղական
ձխականներից շատերում և քաղաքի մասնաւոր մարդոց դպրոց-
ներում:

(Շարունակելի):

Յ. Վ. Մ.

ՍԿՋԲՈՒՆՔ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ.

(Շարունակ. Արարտ. 1882 թ. Ա.)

ԲՈՅՍԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱՌԹԻՒՆԸ.

Բոյսի կեանքը հասկանալու համար, հարկաւոր է ծանօթանալ նորա
ներքին կազմութեան հետ.

Թէ ծաղկաբեր և թէ անծաղիկ բոյսերի բոլոր նիւթը կազմուած է ամե-
նամանր պարկերից կամ փամփուշտիկներից, որոց խորշեր (клеточки)
են անուանում: